

Որակի հոչակագիր **Շինարարական արտադրանքի ինդեքսներ**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Շինարարական արտադրանքի ինդեքսներ
0.2	Ոլորտը	Շինարարություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Շինարարության վիճակագրության բաժին Բաժնի պետ Մարիամ Պետրոսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 524 389, +374 11 580 172 Էլ. փոստ՝ mpetrosyan@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն շինարարական արտադրանքի ինդեքսի վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 20-ական թվականներից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: «Շինարարական արտադրանքի ինդեքս» ցուցանիշը կիրառվում է շինարարության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ցուցանիշի մշակման հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով շինարարություն իրականացնող կառուցապատող՝ իրավաբանական անձանցից, հիմնարկներից, կազմակերպություններից, անհատ ձեռնարկատերերից, մարզպետարաններից, համայնքապետարաններից, ինչպես նաև վարկային ծրագրեր իրականացնող գրասենյակներից ամսական, տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են:
0.7	Տվյալների հավաքման իրավական	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես

	լիազորությունը	նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Շինարարական արտադրանքի, այն է շինարարության ծավալների դինամիկայի վերլուծության համակարգում կարևոր տեղ է գրավում ինդեքսային մեթոդը :</p> <p>Շինարարական արտադրանքի ինդեքսը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանի շինարարությունը բազիսային ժամանակաշրջանի հետ համեմատության միջոցով, այն է՝</p> $I = \frac{V1}{i} / V2 \times 100$, որտեղ <p>I-շինարարության ծավալի ինդեքսն է,</p> <p>V1-հաշվետու ժամանակաշրջանի շինարարության ծավալը,</p> <p>V2-բազիսային ժամանակաշրջանի շինարարության ծավալը,</p> <p>i-շինարարության գների ինդեքսն է՝ հաշվետու ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ համեմատած:</p> <p>Այսինքն, շինարարական արտադրանքի ինդեքսը հաշվարկվում է հաշվետու և բազիսային ժամանակաշրջանում շինարարության ծավալների հարաբերակցությամբ:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Շինարարական արտադրանքը, արժեքային արտահայտությամբ, իրենից ներկայացնում է կառուցապատողների կողմից իրականացված շինարարության ծավալները (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի):</p> <p>Շինարարական արտադրանքի կազմի մեջ ներառվում են՝</p>

		<p>1.Շինմունտաժային աշխատանքներ`</p> <p>ա. կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ, բ. բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն, գ. հիմնական նորոգում` շենքերի (շինությունների), կառույցների, կամ դրանց առանձին հատվածների ուժեղացման, վերականգնման, վերակառուցման, ինչպես նաև ֆիզիկական մաշվածության հետ կապված ինժեներատեխնիկական սարքավորանքների փոխարինման և (կամ) վերականգնման աշխատանքները, դ. ճանապարհների և երկաթուղիների շինարարություն, ե. կոմունալ կառույցների շինարարություն, զ. քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն, է. շենքերի քանդում, շինարարական հրապարակի նախապատրաստում, ը. էլեկտրական, ջրամատակարարման և այլ ճարտարագիտական թ.համակարգերի հավաքակցման աշխատանքներ, ժ. շինարարության ավարտական փուլի աշխատանքներ, ծա. այլ մասնագիտացված շինարարական գործունեություն:</p> <p>2.Սարքավորանք, գործիք գույք, 3.Այլ աշխատանքներ և ծախսեր</p> <p>Հրապարակման խմբավորումներ Շինարարական արտադրանքի ինդեքսները հրապարակվում են ըստ ՀՀ մարզերի և Երևան ք., ֆինանսավորման աղբյուրների, ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ.2):</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական, տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական յուրաժամանակ (օպերատիվ) տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 25-րդ օրը, ամսական առաջին հրապարակումը` հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները` հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և

		սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական, տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:</p> <p>Հետազոտությունը գլխավորապես հիմնված է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հիմնականում համատարած դիտարկումների վրա: Հետազոտության մեջ տնտեսավարող սուբյեկտների ընդգրկումը և դրանց կողմից պաշտոնական վիճակագրական տեղեկությունների պարտադիր տրամադրումն ամրագրված է վիճակագրության ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերում:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Տվյալները հավաքվում են հիմնականում համատարած հաշվառման մեթոդով:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանելիության մակարդակը 98% է:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 2002թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 2002-2009թ.թ. ցուցանիշը ներկայացվել է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին համապատասխան (մշակված Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE-ի հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է ՏԳՏՀԴ խմբ.2-ը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ Առկա չէ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ կազմակերպությունների տնտեսական գործունեության հետազոտության) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	<p>Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:</p> <p>Նախնական տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:</p>

5. Մատչելիություն

<p>5.1</p>	<p>Տարածման ձևաչափ</p>	<p>Հրապարակումներ</p> <p>Ամսական հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն): Եռամսյակային հրապարակումներ «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիր (հայերեն):</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն):</p> <p>Տվյալների բազաներ</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82</p>
<p>5.2</p>	<p>Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը</p>	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար. ա/ իրավաբանական անձի ծածկագիրը բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը,</p>

		<p>ե/ կազմակերպական-իրավական ձևը, զ/ իրավաբանական անձի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, է/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի), Անհատ ձեռնարկատերերի համար. ա/ անունը, ազգանունը, բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը, դ/անհատ ձեռնարկատերերի գործունեության իրականացման վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով էլեկտրոնային փոստի հասցեն, ե/ իրականացված շինարարության ծավալը (առանց ավելացված արժեքի և այլ անուղղակի հարկերի),</p>
5.3	Փաստաթղթավորում	<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Շինարարական արտադրանքի ինդեքսի հաշվարկման համար առավել մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. հոկտեմբերի 19-ի ««Հաշվետվություն օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) և 2018թ. հոկտեմբերի 19-ի ««Հաշվետվություն օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների ձևերը և լրացման հրահանգները հաստատելու մասին» թիվ 20-Ն և թիվ 21-Ն որոշումներով հաստատված հավելված 1-ում:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, ինչպես նաև համապատասխան թեմատիկ հրապարակումներում:</p>
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: